

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Մ Շ Ա Կ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
իրաքանիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր ՈՒՆ Ի

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԵՐԿԱՑ 1899 ԹԻԱՆԱՆԻ

Մ Շ Ա Կ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

ՄՇԱԿԸ, ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվա-
նը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝
5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճա-
րեն տարեկան 6 ռուբլի. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժա-
նորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԿՐԱՏԱՆԸ (Բաղրամյան և Բարոնական փողոցների անկիւնը):
Կայրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Ցայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ձ Է Ը Ն Դ ՈՒՆ Վ ՈՒ Մ

Ամսի 21-ին Միքայելեան հիւանդանոցում, կարճատև հիւանդութիւնից յետոյ, վախ-
ճանկեց ուսուցիչ

Ե Ր Ո Ւ Ա Ն Դ Ա Ջ Ա Ր Ե Ա Ն

Որի ընկերները հրաւիրում են յիշատակը յարգողներին ներկայ գտնվել շաբաթ՝ ամսի
23-ին, առաւօտեան ժամի 11-ին, Միքայելեան հիւանդանոցի մատուռում, որտեղից հան-
դուցեալի մարմինը կը փոխադրվի Թօջիվանքի գերեզմանատունը:
2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցեղերի ընդհարում.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Առաջակութիւնները Կովկասում. Նա-
մակ Սերաիմի. Նամակ Շուշու. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Փրանս-գերմանական համաձայնութիւնը.
Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ԲԱԿԱՆ. Պանդխտի կիրակին Հաբէշտանում:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՆԴԻՑԻ ԿԻՐԱԿԻՆ ՀԱՔԷՇՏԱՆՈՒՄ

Կիրակի է: Այդպէս ցոյց տուեց պատիցս
կալված օրացոյցը, երբ ամենօրեայ սովորու-
թեամբ վաղ առաւօտեան մի թերթ ևս պոկեցի:
Մի ամբողջ շաբաթ էլ աննկատելի և առանց
մի հետք թողնելու անցել էր: Բայց դեռ այդ չէ
բոլորը. օրացոյցի թերթերի ամենօրեայ պոկումը
սպառնել է թերթերի հաստ ծալքը՝ թողնելով մի
բարակ շերտ, որի տեսքը նախազգացնում է
տարվայ մօտայալ վերջը: Շուտով այդ օրն էլ
կը գայ և ամբողջ տարին էլ մի հաստ շաբաթի
նման անցած կը լինի ու կրթած անհունութեան
մէջ նոյնպէս անհետանաւ ու աննկատելի: Ու-
վչերի մէջ ապրողն է, որ յուսահատութեան
հարուածի մի դրոշմ էլ կը ստանայ իր ճակատի
ծալքերի տակ: Ահա թէ ինչու նոր տարվայ
զարկումն էլ մեզ չէ ուրախացնում. ինչ տեսնոյ
անցնալու, երբ դեռ նոր էր նա և յուսալիւր ըս-
պասում էինք երջանիկ մի օր տեսնել՝ երբ յան-
կարծ մին էլ տարեմուտն է մեր առաջ պատկե-
րանում: Այն երկուշաբթի, թէ նոր տարին հնի
կրկնութիւնը լինելու է, նոյնքան տխուր իր մի-
օրինակ չըջանով չէ թողնում, որ ձեռներս
պարզելով դիմաւորեմ նրան. ուղում եմ շատ
հեռուն տեսնել և որքան կարելի է յետ մղել
նրա մօտալու գալուտը:

ՑԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Փրանսիական արտաքին գործերի մի-
նիստը Դեկտեմբեր 1-ին, հայրենի ներ-
կայացնելով պատգամաւորների ժողովում
այն դրութեան մասին, որ գրաւում է
Փրանսիան միջազգային քաղաքականու-
թեան մէջ՝ ասաց որ պատրաստվում են
համաշխարհային խոշոր դէպքեր, և պէտք

Կիրակի է: Բայց օրացոյցն է միայն այդ ա-
նունը տուողը: Տանը մենակ նստած՝ նայում
եմ փողոցին: Սովորական անցողաբան: Անց-
նում է սեւամորթը, երկայն գաւազանը ուսին
բռնած, դանդաղ քայլերով անցող ու անտար-
բեր. նոր ետևից դալին են մի խումբ բեռնա-
կիրներ՝ քաջ տալով բեռնով լի կառքը: Նրանցից
մէկը, կենդանու փոխարէն, ինքն է անց կացել
պարանն իր վզով, իսկ միւսները կառքի կողքերից
առաջ են հրում. քաշում են բեռը ու երգում,
ծանրութեան տակ չը թուլանալու համար: Գուրս
եմ գալիս փողոց, մի և նոյն տեսարանը՝ ինչ որ
հասարակ օրերին: Յոյն, ժպտուն երեսով՝ հա-
բէշներն առջև է դնում զինով լի շիշը, մի ու-
րիշ տեղ ֆրանսիացին իր մանրուշքը ծախելով
է դրազված և հողիկը իր արջինն է չափում:
Ամենքն էլ մի մտքով են միայն ծանրաբեռն-
ված. որքան կարելի է շատ փող վատարկել,
որքան կարելի է շատ դիզել այդ հնչուն մետա-
ղից՝ որի ձայնը թոյլ չէ տալիս մի քայլ մտա-
ծել հանգստութեան մասին, և կարծես բնու-
թիւնն էլ այդ դիտարկութեամբ դրկել է մարդ-
կանց այն ամեն բանից, ինչ կարող է հանդը
պատճառել: Չը կայ մի ծառ, որի ստուերի տակ
կարելի լինէր մի թեթև շունչ քաշել. չը կայ մի
պաղ աղբիւր, որի կողքին նստելով՝ կարելի լի-
նէր մի թիչ դովանալ: Միշտ այդպէս արև և առա-
դուտ երկիր, մի արև, որի ճառագայթները պատ-
րաստ են հարուածել անպաշտպան գլուխները,
մի երկիր, որ երբեք չէ ուղում իր ծոցում
պատսպարել և կեանք տալ մի դաւար խոտի:
Այս ամենը—թէ արևի կիզիչ ճառագայթնե-
րը, թէ անհրապէս երկիրը, թէ հարստանալու

է պատրաստ լինել՝ յանկարծակի չը գալու-
ն ազգային շահերը պատուով պահպա-
նելու համար: Եւրօպական ազգերի ընդ-
հանուր խաղաղասիրական ցոյցերի ժամա-
նակ, մի ժամանակ, երբ զինաթափման
ուռաց ծրագրերը դրված է պետութիւն-
ների առաջ, այդպիսի մի յայտարարու-
թիւնը, որ պարլամենտական ամբիոնից ա-
րաւ Փրանսիայի քաղաքականութեան ներ-
կայացուցիչը կարեւոր նշանակութիւն է
ստանում: Նշանակում է, որ չէ կարելի ըն-
դունել, թէ խաղաղասիրական ընդհանուր
արամագրութիւնը ազգերին անխռով հան-
գստութեան բարեկեցիկ է խոստանում
երկար ժամանակով:

Նշաններ շատ կան, որոնք քաղաքական
գաղափարներին անտեղեակ մարդկանց էլ
թոյլ են տալիս հասկանալու, որ դէպքեր,
համաշխարհային դէպքեր, պատրաստվում
են: Անդրօսաքսոնական ցեղի մէջ օր օրի
վրա բորբոքող շփոխտական իմպէրիա-
լիզմը, որ հաւասար չափով մեծարվում է
թէ՛ Թեմալի արիւնքում և թէ՛ Ատլան-
տեան ովկիանոսի միւս կողմում՝ այն վը-
տանքն է, որի առաջ ազգերը պատրաս-
տութիւններ են տեսնում: Անգլիան մի
քանի ժամանակից ի վեր չէ թագնում,
որ պատերազմանք ձգտումները ազգային
մի նշանաբան են դարձել: Ըստ երեւոյթի,
նուաճողական քաղաքականութիւնը մի այդ-
պիսի ընդհանուր հոսանք է դարձել, որ
կարծես այլ ևս չէ կարելի նրա առաջն
առնել: Ապացոյց՝ այն ձգնաժամը, որի մէջ
է պայծառ անգլիական ազատամիտ կուսակ-
ցութիւնը: Այդ կուսակցութեան հին գա-
ղափարն էր զինադրել շփոխված, ապա-
հովեցնել Անգլիայի համար մի խաղաղ,
կուլտուրական կեցութիւն, սահմանափա-
կելով բրիտանական առիւծի արագացնող
զրգոված ախորժակը: Բայց այժմ այդ
հիմնական գաղափարը մոռացվելու վրա է,
և ազատամիտները գտնում են նոյն շփո-
խտական ուղղութեամբ, որին վաղուց
հետևում էին պահպանողականները: Գլադ-
ստոն, որ երկար տարիներ վարում էր ա-
զատամիտ կուսակցութիւնը՝ իր խաղաղա-
սիրական դաւանանքները, ինչպէս երևում
է՝ շատ քիչերին է աւանդել. և դրանք,

մեծ ծերունու ոգուն հարազատ մնացած
գործիչները՝ այժմ հարկադրված են հե-
ռանալ կուսակցութիւնից, տեսնելով որ
«իմպերիալիզմը» յաղթանակում է ամեն
տեղ: Հեռացաւ Հարկօրտ, հեռացաւ և
Ջոն-Մորլէյ: Ազատամիտների վաղեմի դա-
ւանութիւնների կողմնակիցները քիչ են և
յամենայն դէպս այժմ նրանք այնպիսի
ձգնաժամի մէջ են, որ չեն կարող դիմա-
դիր ոյժ հանդիսանալ:

Անդրօսաքսոնական ցեղի այդ սպառնա-
լից դերքի առաջ լատինական ցեղը իրան
մեծ վտանգի ենթարկված է համարում:
Լատինական ցեղի ամենախոշոր և ուժեղ
ներկայացուցիչը Փրանսիան է: Եւ Թեմ-
ալի արիւնքից ու Վաշինգտոնի հայրենիքից
եկող հոյեքր այնքան տագնապալից են թը-
ւում նրան, որ նա շատ աշխատում է
նոյն-իսկ իր անհաշտ թշնամու, Գերմա-
նիայի հետ միանալ: Այժմ Փրանսիայում
քարոզվում է Փրանս-գերմանական միու-
թեան գաղափարը, և դա այլ ևս այնքան
վայրենի, անհասարկ միտք չէ համարվում
ինչպէս տարիներ առաջ: Այժմ Փրանսիա-
ցին հաշտվում է այն մտքի հետ, թէ կա-
րելի է մոռանալ Ելզաս-Լօթարինգիան
Անգլիայի և Ամերիկայի արշաւանքին դեմ-
ադրու համար: Բայց ո՞րտեղ պիտի տեղի
ունենայ այդ ահաւոր ընդհարումը, որի
երկուցը հարկադրում է նոյն-իսկ Փրան-
սիացուն ընկնել իր թշնամու գիրկը: Պայ-
թուցիկ նիւթեր շատ կան դրված երկ-
րագնտի զանազան կողմերում: Քաղաքա-
կան աշխարհը ինքն էլ չը գիտէ, թէ ո՞ւր
է ամենից վտանգաւոր, ամենից հեշտ
բռնկող կէտը: Լարված ուշադրութեամբ
նայում են հակառակ կողմերը: Ո՞վ կը
լինի սկսողը, և սկսածից ի՞նչ փոփոխու-
թիւններ առաջ կը գան: Գերմանիան գին-
վում է. Թիւրքիան իր վերջին հիւթերը
սպառում է գինուրական պատրաստու-
թիւնների վրա: Անգլիան մեծացնում է
իր ոյժերը, Ամերիկան նոյնպէս: Ընդհա-
րուած, եթէ տեղի ունենայ ի հարկէ,
միայն որոշ ցեղերի մէջ չի լինի, այլ կը
բորբոքէ համատարած հրդեհ:

տաճեռն ճանապարհորդներին գրաւելու: Հապա
վածառականները, հօ նրանք ուղում են շոգե-
նաւի շուտ մեկնելը, որ կարողանան իրանք էլ
շուտով ստանալ իրանց համար եկած ապրանք-
ները և լաւ գնով վաճառել: Մեզպէսներն էլ
ուղղակի պօստատուն են շտապում և միմեանց
հրծպելով՝ նեղ անցքից ձեռներս պարզում՝ ա-
մենից առաջ խելում մեր միակ բաժինը՝ սիրելի-
ների նամակները կամ մենակութեան միակ ըն-
կեր լրագիրները: Այդ օրն է, որ մեզ համար ու-
րախութեան օր է լինում, այդպիսի օրերին են
տրոփում մեր սրտերը, երբ բաց ենք անում հե-
ռու հայրենիքից եկած մեր սիրելիների նամակ-
ները և մտաբերում քաղցր յիշողութիւնները: Այդ
օրը մենք մոռանում ենք ամենը. ոչ մեր շըր-
ջապատն է ամայի լիւում մեզ, ոչ արևը կիզիչ:
Այդ օրը մենակ չենք դուռ մեզ. սառը նամա-
կը, նրա անխոս տառերը այդ րօպէին շունչ են
առնում և մեզ փոխադրում մեր սիրելիների
գիրկը: Մի քանի քաղցր րօպէներ են դրանք,
նման անձրևի այն կաթիլներին՝ որ ընկնում են
արեակէզ դաշտի մէջ, մի քանի օր ևս ապրե-
ցնելու դալկահար ծաղիկներին:

Այդ օրն էլ է անցնում... քաղաքն իր սովոր-
ական լուսութեան մէջ է ընկնում, մարդիկ
կծկում են իրանց նեղ բնակարաններում ու
յուսալիւր օրերի սպասում: Անցնում են օրեր,
գալիս է կիրակին, այն կիրակին, որ միայն օրա-
ցոյցի վրա է նկատվում և որը անցնում է ա-
ռանց մեղմացնելու ամայութեան մէջ ապրող
թախծալի կեանքը:
Գ. ԱՅԻՐԱՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Պետերբուրգի Վարդան Զանդեան 1898 թ. առաջին դիրքը այժմ էլ լայն տեսնում։ Ինչպես համարեա միշտ՝ այս անգամ էլ պ. Գուլամիրեան իր պատկերազարդ հրատարակությունը սկսում է դառն դանդաղությամբ։ Վերջինիս խոսքը յօդուածը սկսվում է այսպես.

Թէև մենք էլ մի փոքր ազդուվում ենք կազմում, բայց այնու ամենայնիս չէ որ մենք էլ իրաւունք ունենք հոգ տանելու և ծագ-կեցնելու մեր մայրենի լեզուն, գրականու-թիւնը, մամուլը և այլն, որ մի ազգի կենսու-նակութեան տարրերից գլխաւորներն են հա-մարվում։

Դա ոչ միայն իրաւունք է, այլ և պարտաւա-նութիւն, կը պատասխանենք մենք։ Վարդանը մենք միշտ նայել ենք՝ իբրև մի գեղարուեստա-կան հանդէսի, որ հայ ընտանիքներում աւելորդ չը պիտի համարվի։ Այլի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Պետերբուրգի պատկերազարդ հանդէսը առ հասարակ համեստութեամբ ձեռ-նում է տալ այն, ինչ կարողանում է, թէև մի մի գլուխում է այդ տեսակ հրատարակութիւն-ները համար միանգամայն խորթ և անտեղի հը-րապարակութեան մէջ՝ մենք ցանկութեամբ ենք յայտնել, որ հայոց հասարակութիւնը այն-պիսի դիրք բռնէ դէպի պ. Գուլամիրեան, որ սա այնքան դառն դանդաղանում է, որ ամբողջ նայալ Վարդանը, Վարդանը այսօր էլ հե-ծում է նրա վրայ անապատութեան տակ։ Բանը այն տեղին է հասել, որ հրատարակիչը գրել է ամենամանրագիշտ ծախսերի ցուցակը, որի մէջ, ի հարկէ, չը կայ աշխատողների հա-մար որ և է վարձատրութիւն. նոյն-իսկ ձրի գրական աշխատանքով՝ Վարդանը լոկ տպա-գրութեան և այլ ծախսերը հատում են 2281 ռուբլի գումարի ամեն մի գրքի համար։ Այդպի-սի մի գումարը տարեկան 3 ռուբլի բաժանոր-դագին ստացող հանդէսը չէ կարողանում հայ-թիւթիւնը։ Ան գանգաւոր իրաւացի առիթները և հրատարակիչը, կամենալով գտնել հայ հա-սարակութեան անտարբերութեան պատճառները՝ է միջի ալըց, ասում է.

Բազմում այսօր ժողոված են հարիւրաւոր երիտասարդներ, որոնք ոչ միայն բազմաբա-նակ հաղորդելով եկամտի աղբիւրներ ունեն, այլ նաև ապագայ կրթութեան դառնալու հա-մար քաղցր երազներ են որոնում՝ հոգեք գը-նելով, գործարաններ բանալով, սակայն մի-այն դրանք, որպէս կրթված ու երիտասարդ ոյժեր, դիւրութեամբ կարող կը լինէին ամ-բողջ հայ մամուլի ապագայի՝ եթէ միայն այդ մեծ մեծ խոսող ու դատաւիտող երիտասարդ-ները գիտակցօրէն վերաբերուէին դէպի իրանց պարտքը և փոխանակ աւելորդ համարված հաղորդներ կեանքի այլ և այլ անտեղի հա-ճոյքներով վրա չուայելու՝ ժողովին դրանցից մաս հանել և ամբողջ հայ ժողովրդի շահերին ծառայող հայ մամուլին, բայց...

Ապշբոսեան միջոցներով վրա մեր մամուլը առ հասարակ մեծ յոյսեր ունի դրած։ Ուստի թող ենք տալիս այդ առիթով երկու խօսք ա-նց պ. Գուլամիրեանին։ Պէտք է միանգամայն ընդ միշտ հասկանալ, որ հայ մամուլի և գրա-կանութեան պահպանողները փոքրապաշտ բուր-ժուանքը չեն, լինեն նրանք դիպլոմաւոր թէ ա-ռանց դիպլոմի, այլ ժողովրդի մարդիկ, գործա-կատարներ, արհեստաւորներ, ուսուցիչներ և այլն։ Այս անկախաձեռն իրողութիւնը կարող է հաստատել իւրաքանչիւր խնդրագրութիւն, իւ-րաքանչիւր հեղինակ։ Մենք յուսահատական չենք համարում այս դրութիւնը։ Մամուլը, գրա-կանութիւնը ողորմութեամբ, քարերարութեամբ չէ կարող ապրել. հարուստի ըսական չաք տըն-կած գրական հրատարակութիւնը կարող է ապ-րել մի-երկու-երեք տարի, բայց ոչ աւել։ Հայ գրական աշխատաւորի թիւկոնքը պիտի լինի ընթերցողը։ Սա է ոյժը, սա է սպառողը և պահանջ առաջացնողը։ Եւ անհերքելի ու վերա-ւորական կը լինի մի ժողովրդի համար, որ փո-քորը ի շատէ ինքնաճանաչութիւն ունի՝ եթէ նա իր կօպէկներով, իր ուշադրութեամբ չը պահ-պանէ այն գրականութիւնը, որից ինքը սնունդ է ստանում։ Եթէ Բագուի կրեւորը աւելի լաւ է համարում իր անմիտ գուարճութիւնների համար փողի կոտոր ոչնչանելը՝ այդ ոչ դարմանալի է, ոչ անբանական խնդրանք իր հասարակութեան մէջ կան մեռած տարրեր, մեռած՝ բուն ժողովրդ-դական, գաղափարական գործի տեսակէտից։ Ա-ւելի լաւ չէ թողնել մեռելներին և դիմել կեն-դանի, գործունեայ ոյժին։ Չենք կարող ասել, թէ մեր ժողովրդի մէջ ընթերցաւորութեան պա-հանքը մի քարացած կէտի վրա է մնում. ոչ, տարբեր առաջ և այժմ տարբերութիւն կայ։ Այս հանգամանքը պիտի մեզ խրախուսէ, ցոյց տալ այն ուղղութիւնը, սրով պիտի գնանք։ Հե-

տարբեր ընթերցողին, տալ նրան մտաւոր ա-ւողջ և ակործելի կերակուր—սան գաղափար։ Բագուի կրեւորը ամեն օր իր աչքի առջև տես-նում է հազարաւոր դժբախտ արարածներ, որոնք իրանց մարմնի աղբ դուրս հանելով են մի կտոր հաց ձեռք բերում, տեսնում է, և այնքան հաստ շղեր ունի, որ չէ կորցնում իր սովորական բա-րեբախտ հանգստութիւնը։ Նրանից դուր պա-հանում էք պարտաճանաչութիւն, այն էլ գրա-կանութեան վերաբերմամբ... Միթէ կարծում էք թէ նրանք են լինում մեր ժամանակները...

*

Ամերիկայի միսիոնարները երկար տարիներից ի վեր գործում են Փիւրքաց Հայաստանում։ Ա-հաղին գումարներ ստանալով Ամերիկայից՝ բո-ղոքական պրօպագանդան համեմատաբար աչքի ընկնող ազդուութիւն էր գտնում. բացվում էին դպրոցներ, մեծ քանակութեամբ կրօնական գըր-քեր էին տարածվում։ Այժմ «С. Петербург. Вѣд.» լրագրում մի ոմն Արեւելագէտ, որ, ինչպէս երևում է, եղել է Ասիական Փիւրքայում, ծա-նօթ է դէպքերի և գործիչների հետ՝ մի ընդար-ձակ յօդուած է գրել, որի վերաբերմամբ է. «Ինչ-պէս են շահագործոււ բարձր գաղափարները»։ Շահագործողները ամերիկայի միսիոնարներն են, շահագործվողը — քրիստոնէական գաղափարը։ Հեղինակը կրօնական քարոզիչներին դուրս է բերում իբրև հրէշներ. հաստատում է, որ ա-մերիկայի միսիոնարները Հայաստանում կառա-րում է Յուդայի դերը, մի կողմից գրգռելով հայերին, միւս կողմից մատուցութիւններ անելով թիւրք կառավարութեան ձեռք։ Հայկական դժ-բախտութիւնները, ասում է հեղինակը, միսիո-նարներին հարկաւոր են ամերիկայի հարուստ կրօնամոլների գրգռները մզելու համար։ Պէտք է ցնցող լուրեր ուղարկել Ամերիկա, որ-պէս զի այնտեղից դոլարներ թափվին։ Եւ այդ դոլարները, ինչպէս ասում է հեղինակը՝ ժող-նում են միսիոնարների գրգռել, իսկ թիւրքա-հայ ժողովուրդը համարեա ոչ մի օգուտ չէ տեսնում։ Ի միջի ալըց «Արեւելագէտը» հաղոր-դում է հետեւեալ փաստը.

Հայաստանի անցեալ անկարգութիւնների ժամանակ Փրկութեան բանակը՝ Լճագոյնի՝ հայկական կենտրոններն ուղարկեց նշանաւոր քանակութեամբ փոքրիկ բրօշուկներ, որոնց մէջ հայերին առաջարկում էր երկնային ար-քայլութիւն տառնալու համար միանալ լիշակ զբանակին, ի հարկէ ստանալով մի գումար, որ շատ փոքր էր։ Մեթոդիստ եակիները յօգտեցան Մրցակցի, ոչնչացնել նրան։ Եւ ահա նրանք սովորեցին մի հայի, որ մեթո-դիստ դպրոցի ուսուցիչ էր, գրել Բիթլիսի վալի Բահրի փաշային մատուցելով այն բո-լոր հայերի վրա, որոնք ստացել են յիշած բրօշուկը։ Օգուտ քաղելով, որ փաշան շատ էլ գրգռէ չէ՝ նրանք խորհրդ տուին ու-սուցիչին՝ «Salvation Army» (Փրկութեան բա-նակ) բառերը թարգմանել «Փրկութիւն Հայ-աստանին»։ Ներգութիւնը ապրովեց, վալին անմիջապէս հրամայեց բանտ նստեցնել բո-լոր հայերին, «որոնք յարաբերութիւն են սկը-սել Լճագոյնի այն ընկերութեան հետ, որը ու-ղում է փրկել Հայաստանը»։ Մեթոդիստները հրճվեցին, իր ժողովուրդը մատնաբան հեռա-գրել անգլիական և ամերիկական լրագիր-ներին՝ «Բիթլիսի վալիի վրդովեցուցիչ կամա-ցականութեան» մասին։

Այսպիսի մեղադրանքներով լի է յօդուածը։ Իսկ թէ որքան արդար են դրանք՝ այդ մասին դատելու կարողութիւն չունենք մենք։ Նիւթեր չը կան. թիւրքահայերի գրականութիւնը լուրջ, բազմակողմանի ուսումնասիրութիւններ երբեք չէ տուել. իսկ լրագիրների մէջ երեսցող կըց-կտուր տեղեկութիւնները աւելի նպաստաւոր կարծիքներ են ստեղծել տալիս։

ԱՌԱՋԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԱՍՍՈՒՄ

I

Վերադառնում ենք պ. Մ.-ի յօդուածի վեր-ջին (տե՛ս «Մշակ» անցեալ տարվայ, № 223)։ Հեղինակը այս անգամ առաջարկում է այն մի-ջոյնները, որոնք, իր կարծիքով, անհրաժեշտ են աւագական լրագրի արմատախիլ անելու համար։ Բայց այստեղ մենք չենք կարող շատ կէտե-րում համաձայնվել յօդուածագրի հետ. ինչպէս երևում է՝ գեղեցիկ դիպոցով դեռ չէ նշանա-կում և նպատակայարմար դեղերը առաջարկելը։ Մենք առաջ ենք բերում այն միջոյնները, որոնց օգուտը մենք էլ ճանաչում ենք, տեղ-տեղ հե-ղինակի, մասամբ և մեր պատճառաբանութիւն-ներով։ Չենք ասի, որ կողմանան մամուլը, մասնաւորապէս և «Մշակը», դրանց վրա կանգ չէ աւել. նիւթի կարևորութիւնը և լրջութիւնը ներքին է անուս կրկնողութիւնը։ Առաջարկած միջոյնների մի բանիւր ըլլում են աւագականութեան պատճառների անալիզից։ Ահա այդ միջոյնները։

1) Երկրի ազգաբնակչութեան գլխա-

վին զին աթ ափ անելը։ Իսկ որ՝ դարձնա-լի պատկեր է ներկայացնում մեր երկիրը եւրո-պացու աշուտ (մեր աչքը դրան սովորել է մանկութիւնից)։ Անցե՛ք Անդրկովկասի մի ծայ-րից միւսը, մանաւանդ մուսուլմանական եր-կրները. ձեր առաջ կարծես չարժեքիւս լինի մի զինված բանակ. մարդիկ անց ու դարձ են անում ոտով, ձիով, կառով և վրնված ոտից մինչև գլուխ ու կասկածելի ուշադրութեամբ նայում են անձանթ անցնողներին։ Այդ զին-վածները, ընթերցող, խաղաղ, իրենց աշխա-տանքին գնացող մարդիկ են, և նրանց հետ խաւն անցնում են և՛ Արուգարները, Նաբինները։ Հեղինակը առաջարկում է ընդհանուր և կատա-րեալ զինաթափութիւն, գործը սկսելով ազնու-ական տարրից՝ կնեզներից, խաներից, բէկե-րից և անդադար հոկել, որ բնակիչները նորից չը զինվեն։

Բայց հասկանալով որ առաջին անգամից զի-նաթափում կարող է միայն աւագականների գոր-ծը հեշտացնել՝ յօդուածագիրը առաջարկում է՝ զենք բաժանել խաղաղ հասարակութիւններին, ուսու և գերման ազգերից։ Հեղինակի կարծիքով տեղացիները մի և նոյն է վախենում են զենքի դիմել աւագականի յարձակումների ժամանակ։ 2) Պահակներ (земская стража) և կազմակերպչութիւնը։ Փոխանակ անպէտք չափարժեքի՝ պաշտօնի հրաւիրել ծառայութեան արւսութիւնը հասկացողներին, բացառապէս ուսու ազգից և այն էլ զինորա-կան դասից։ Մենք հեղինակի նման հեռու ենք տեղական աղաքատիւթիւնով վարակված լինե-լուց, և սակայն կարծում ենք, որ մարդավայել ըրաճատութիւնը, մանաւանդ ազնու, անա-չառ զլխաւոր ընտրութիւնը, կարող է տե-ղացիներին միջից առանց խտրութեան ազգի շո-կել ցանկալի մարդկանց, որոնք այն առաւե-լութիւնը կունենան, որ տեղական պայմաննե-րին ծանօթ են։ Չէ որ տեղացի էին այն երկու-քայնը, որոնց արարքը դարմանք յարուցեց Ա-բաշիձէի դործում։

3) Պահակները պիտի բնակեցնել ոչ միայն այսպէս ասած փոշուրուած, արբունի պոս-տը և չինովիկներին ուղեկցելու համար, այլ և ամենուրեք՝ ժողովրդին հակելու, նրան պաշտ-պանելու համար։ Մենք մտաբերում ենք Անդր-կովկասում այնպիսի բանակ ճանապարհներ, ո-րոնք դուրս էին այդ տեսակ կայարաններից, և հենց այդ տեղերը տարիներ ընթացքում հըռ-չակված էին իբրև աւաղանների բոյներ։ Մոլա-Նասրաղներ՝ Շուշու գաւառում և Բօյախները՝ Ջուանչիրի գաւառում՝ ձեզ օրինակ։

4) Կազմակերպչել զիւղական պօլի-ցիա։ Բաւուս բուն նշանակութեամբ նա Ան-դրկովկասում բացակայում է։ Լայնածաւալ գա-ւառներ, իրանց նահապետական, զուարճանցա-նե-լի ճանապարհներով բաժանված են 3—4 պրիս-տաւութիւնների մէջ։ Ամեն մի պրիստաւ ունի սովորաբար 2 ցրիչներ (разсыльные) և երկու չափար, և այս ոյժով նա պիտի համ կատարի իր գործերը, համ հսկի չուրջ 60—100 վերստի վրա։ Պարզ է, որ նրանից աղագրականութիւնը օգուտ չէ կարող ստանալ և կողպումների ժա-նակ ամենավերջինը հանում է պրիստաւը, որ շատ անգամ իսկի մեղաւոր էլ չէ։

Անշուշտ երկրորդ, երրորդ և չորրորդ կէտե-րում յիշած միջոյնները կը ծանրանան զգեսկի-բովժելի վրա, որ ուղղակի ստացվում է աղագ-րականութիւնից. բայց ինչպէս է կորցնում ժողո-վուրդը իր անտէրութիւնից. դրան պերճախօս, նոյն իսկ անհաստատի պատասխան կարող է տալ թաւանի մասնված խաղաղ աղագրականու-թիւնը, օրինակ Շուշու գաւառի Վարանդա մա-սի գիւղացիներն...

5) Դիւղական դասի կատարեալ ա-ղաւորութիւնը բէկերից և միւսնադա-մայն հողերի սահմանները որոշուածը։ Հեղինակը պարզ չէ որոշում, թէ՛ ինչու և կայ-անում այս աղաւորութիւնը։ Ստանում ենք իւրե-րից հողերի ցու գնելու (ВМЕРУП) մասին է։ Խնդրի այդ արմատական լուծումը, թեթեւացնե-լով գիւղացու տնտեսական նեղ դրութիւնը, (տե՛ս մեր յօդուած «Մշակ» № 97 անցեալ տար-վայ), կը ներշնչէր նրան աւելի բարձր, մարդ-կային գաղափարներ։ Յու է ասել, որ ձոր-տութիւնը մեզ ձուր կ'ու պէս դոյնութիւն ունի և մարդիկ իրանց ճանաչել են տալիս ի-րանց տէրերով. օրինակ, «Հաֆար բէկի մարդ-կանցից եմ», ճիշդ ինչպէս ուսու ճորտը ասում էր «Строгоновские бугаеъ, Юсуповские» և այլն։ Իսկ ով է տէրը. եղաւատատանական և վարչա-կան գործերի և միւսով չարք հաստատում է, որ աղաւորները և բէկերի աղեցնութիւնը թուրք աղագրականութեան վրա միասակար է թէ՛ բա-րոյական և թէ՛ տնտեսական կողմից։ Այդ աղ-նականները լայն ծաւալով պարապմունք են չի-

նել՝ պետական և անգամ գիւղացիներին պատ-կանող հողերի իւրացնելը, հենց նոյն գիւղացի-ների օգնութեամբ, որոնք անհպին կախում ու-նեն նրանցից։ Նմանապէս շատ բէկեր և աղա-լարներ անմիջապէս իրանք մասնակցում են կո-ղպումների և թաւանների մէջ, որ նոյնպէս հաստատված է։ Վերջապէս, բիւ չեն պատա-հում և թուրք աղաւորականներ, որոնք, հեռու մնալով՝ իրապէս պահում են աւագական խոմ-բեր, որոնց միջոցով վախենում են չրջակայ աղ-գաքականութիւնը, զնեղով նրանց վրա կ'օնո-րիւրուցի, որ բնակիչները անպարման հա-տուցանում են, վախենալով կատարեալ քայ-քայլմից և անգամ մահից։

Պետրոս Զաքարեան

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Յունվարի 15-ին

Գուցէ ոչ մի քաղաքում չը լինեն այնքան աղ-ջիկներ, որքան Սյունիում. դրանց թիւը երի-տասարդների թիւի հետ համեմատած՝ թուաբա-նական լեզուով, վերաբերում է, ինչպէս 10:1: Ծառերը հատում են 30 տարեկան թաւամած հասակին։ Ինչ է պատճառը—ասա հարց, որ ծագում է դաւառական կենդան գիտողի մըտ-քում։ Պատճառը լուրջ է և ծանր։ Երիտասար-դութեան բացակայութիւն է դա։ Մեր քաղաքն այնքան ուժասպառ է եղել, տնտեսապէս քայ-քայլել որ արտաքսում է կենսունակ ոյժերը— երիտասարդներին օտար քաղաքներ, անկարող լինելով նրանց ապրուստը հայկթիւն։ Սյու-նիում գործ չը կայ. երիտասարդներ հարկաւոր է ասպարէզ, և նա ստիպված հեռանում է, այլ ևս չը վերադառնալու համար։ Հենց այս ծանր պատճառից է, որ մեր երիտասարդների մեծ մասը այսօր ցրված է Կովկասի և Ռուսաստա-նի քաղաքներում։ Երիտասարդների բացակայու-թիւնն առաջացրել է օրիորդների առատութիւն։ Եւ մեր խեղճ օրիորդները սպասում են, որ գի-տաւոր աստիճանայ յայտնվի մի երիտասարդ և ամուսնանայ մէկի հետ...

Միւս կողմից չարքի պատճառը իրանք օրի-որդներն են։ Կար ժամանակ, երբ մեր օրիորդ-ները որոնում էին փեսացուի մէջ միայն հարըս-տութիւն, իսկ այժմ պարագաները փոխվել են։ Բարեկրթութիւն, դիրք, պարապմունք, թէկուզ ոչ այնքան ապահովութիւն փեսացուի՝ կազմում են առաջնակարգ պահանջներ։ Սրան աւելա-ցնենք և այն, որ մեր օրիորդները շատ սիրա-լից են և այն, որ մեր օրիորդները տանել չեն կա-նք։ Թող մեր օրիորդները չափաւորեն իրանց պահանջները և իզուր հասարկ չը թաւառե-ցնեն, մանաւանդ որ նրանք (թող չը վերաւոր-վեն) տարբական կրթութեան տէր են, բայց ի-րանց անհամեմատ բարձր են երեւակայում։ շա-տաւոր դուրս են և տարբական ուսումից։ Թող մեր ցրված երիտասարդներն էլ յիշեն իրանց միջնակայքը և ամուսնանան այստեղ. այդ նը-րանց բարոյական պարտաւորութիւնն է։ Մենք ինքներս պէտք է դարձանք մեր ցաւերը...

Յայտնի է, թէ որքան մեծ նշանակութիւն ունի արհեստը իրական տարրի համար։ Կար ու ձեռն դպրոցի բացակայութեան պատճառով՝ մե-ղանում օրիորդների մէջ արհեստը սատիկ կա-զմում էր։ Սակայն վերջին տարիները այդ չա-րքը մասամբ վերացել է՝ չնորհիւ օրիորդ Ե. Գալստեանի, որ ամուսնուր կերպով տարածել է կար ու ձե և ձեռագործ օրիորդների մէջ և պատրաստել է այդ արհեստն իմացող մի մեծ խումբ։ Մենք անձամբ տեսել ենք նրանց գոր-ծուածքները, ասեղնագործութիւնները, կարերը և զմայլվել ենք։ Ենթոյն սեփական աշխատան-քի՝ շատերն իրանց ապրուստը իրանք են հայ-թիւթում։ Օր. Գալստեան արժանի է քաջաբե-րման և համակրանքի։

Ժամանակը, Կիլիկիայի նիւաքանդ են ա-նում ամեն ինչ։ Կար ժամանակ, երբ մեր օրի-որդներն ու տիկիներն կազմում էին խաւն ե-րեկոյթներ. իսկ այժմ նրանք անշուշտ են՝ ա-ռանձին «վէշներ» են կազմում իրանց «համ-բարի» համար։ Մենք յաճախ ներկայ ենք լի-նում օրիորդների երեկոյթներին, և չենք կարող ուրախութիւն չը յայտնել, տեսնելով որ մայր-նի լեզուն տարածվում է վրացախոս քաղաքում։

Հռչակաւ...
Սյուն. ամ...
երեկոյթ...
խորհուրդ...
նակը անց...
Շուշու...
Միւս կողմ...
անգամ...
յանապատ...
Ժողովու...
ուրի պէս...
որ ոչ մի...
հրապար...
նակաւ...
դրել նորի...
Ժաման...
մեր քաղ...
հասցրեց...
րովհետեւ...
վաղուց ե...
Երկու...
թիւն ստ...
գծից, ա...
Սրանք կ...
տալ և բա...
մեր յոյսը...
ման հա...
իր դոյն...
մարեա ոչ...
րութիւնը...
փողոցնե...
վառելիք...
և այլն...
Եւ ինչ...
փոքր իշ...
կայ։ Փոք...
են։ Ուրա...
Թօփխան...
թիւլ տալ...
վաճառե...
Մտնե...
բով։ Այս...
րում, ինչ...
ներից շա...
մնացածն...
բաժանվե...
է ունեցե...
է, ինչ...
ներկայա...
սոր ամ...
կան «Ե...
Գրադար...
և անդա...
թական...
գնում իր...
ծախս. ի...
ներով դ...
են անու...
տում, բա...
լութեան...
Գրանց...
իր տիրա...
սարակց...
բոլոր կա...

